Հավելված 10
ԱՊՔ ՊԸԾՁԲ-01/01 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

## ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ԱՊՔ ՊԸԾՁԲ-01/01

(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Ալավերդի «___» փետրվարի 2017թ.

“Պահունի ՍՊԸ”-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Կարեն Թանդիլյանի /ID 002125920, 22.06.2025, 055/,որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետ՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

### 1.ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.7Ընկերությունը մասնակցում է «Ալավերդու պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ անվտանգության ծառայությունների ձեռքբերման ԱՊՔ ՊԸԾՁԲ-01/01 ծածկագրով պարզեցված գնման ընթացակարգին:

1.8 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ “Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների”:

1.9 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.10 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.11 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.12 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է “ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ” ՓԲԸ (Վարկային բյուրո):

### 2.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

### 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը՝ ՊԱՀՈՒՆԻ ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, Լոռի մարզ, գ,Հաղպատ
Սպասարկող բանկի անվանումը ԱՇԻԲ Ալավերդու մ/ճ
Հ/հ 2477903154660000
ՀՎՀՀ 06609263

տնօրեն ---------------------------- Կ.Թանդիլյան
(ստորագրություն)

գլխ.հաշվապահ ----------------------------
(ստորագրություն)

Կ.Տ